

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎՈՐԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՆԻՄՆՈՎԻՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՎԱԾ ՇԵՆՔԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի, փեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնովին վերանորոգված շենքի բացման արարողությունը: Վերանորոգման աշխատանքներն իրականացվել են ամերիկահայ բարերարներ Կերև և Կիկին Գևորգ և Սիրվարդ Հովհանյանների հովանավորությամբ:

Հանդիսության սկզբում Գևորգյան հոգևոր ճեմարանի փեսուջ Տ. Եղիշե ալ. քին. Սարգըսյանն անդրադարձավ 130-ամյա կրթական հաստատության փառապանմ պատմությանը, նրա ունեցած կարևոր դերակատարությանը մեր ժողովրդի կյանքում:

Գևորգյան հոգևոր ճեմարանին վերապահված բացառիկ նշանակության մասին իրենց խոսքն ասացին ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն ու ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Ներկաներին իր սրբի խոսքն ուղղեց նաև բարերար Գևորգ Հովհանյանը՝ ասելով. «Տեսնում եմ, որ Մայր Աթոռի ոսկեդարը նոր է սկսվում, Վեհափառ Տեր: Հուսով եմ, որ նոր սերունդը պիտի հեղինակի Ձեր օրինակին՝ առավել գորացնելով Ս. Էջմիածինն ու մեր Մայր Եկեղեցին, քանզի միայն հայոց Եկեղեցին է, որ իր 1700-ամյա փորձառությամբ կարողացել է մեզ հայ պահել ու ջերմացրել մեր հոգիները՝ մեր մարմնում և սրբում միշտ վառ պահելով սերը դեպի մեր հայրենիքն ու մեր Եկեղեցին»:

Վերջում ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն հայոց հայրապետը՝ անդրադառնալով այն կարևոր առաքելությանը, որ վերապահված է եղել և է Գևորգյան հոգևոր ճեմարանին՝ բարձր գնահատելով ազգային բարերարներ Կերև և Կիկին Գևորգ և Սիրվարդ Հովհանյանների, ինչպես նաև Հովհանյան գերդաստանի անսակարկ նվիրումը՝ հանդես գալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու մեր հայրենի պետությունը:

«Այսօրվա ուրախությունն աղոթք է դարձել մեր հոգում մեր երջանկահիշատակ նախորդ հայրապետների համար, որոնց փեսուքն ու երազն է եղել փեսունել վերաբացված դռներն այս պարմական հաստատության, փեսունել գորացած ու անշեղ ընթացող մեր Եկեղեցին: Զանգի նրանով են ապրել և պահպանել իրենց ինքնությունը մեր նախնիք, նրանով են հաշտունջ ոգով կրթել ու դաստիարակել իրենց զավակներին», - նշեց Գաբրիել Բ Կաթողիկոսը:

Բացման արարողությանը ներկա էին Հովհանյան գերդաստանի ավելի քան 30 անդամներ, Գերագույն հոգևոր Խորհրդի անդամներ, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Հովիկ Հովհանյանը, ԳԱԱ-ի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ԵՊՀ-ի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, մշակույթի և գիտության մշակներ ու բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությանը գեղարվեստական հայրագրով հանդես եկավ Գևորգյան հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՎՀԱՆՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ